ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№Ք/13/3204-21 առ "08" 12 2021թ.

«Մայ Մարկետ» ՍՊԸ տնօրեն՝
պարոն Ս. Եսայանին

[№01/261 առ 01.10.2021թ. պայմանագրի
միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի պարոն Եսայան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռք բերման նպատակով, ս/թ հոկտեմբերի 1-ին մեր միջև կնքված թիվ 01/261 պայմանագրով՝ 1 906 585 (մեկ միլիոն ինը հարյուր վեց հազար հինգ հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ ընդհանուր գումարով, Ձեր կողմից ս/թ հոկտեմբերի 11-ին մատակարարված պայմանագրի 19-րդ, 46-րդ, 47-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները չեն համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և ենթակա են վերադարձման: Մյուս չ/բ-երի ապրանքների դիմաց վճարում իրականացնելու նպատակով առաջարկում ենք փոխել Ձեր կողմից հոկտեմբերի 11-ին դուրս գրված թիվ Ա 1994310590 հաշիվ-ապրանքագիրը՝ դուրս գրելով ճշգրտված հաշիվ նվազեցումով:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

- 2.4.1 կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»
- 2.1.7 կետի «Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

  2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա) «Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում»;

բ) «Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի»»:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի հետ 2021թ. հոկտեմբերի 1-ին կնքած թիվ 01/261 պայմանագիրը 19-րդ, 46-րդ, 47-րդ չափաբաժինների մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքների մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ ԳԲ 2-րդ կարգի մասնագետ՝
Կ. Համբարձումյանը,
+374 10 28 – 29 - 60